# Միջազգային գիտաժողով

**«Շախմատային կրթության տեսություն և պրակտիկա»**

**Ծաղկաձոր, Հայաստան**
**2026 թ. հոկտեմբերի 1–2**
**Հիբրիդային ձևաչափ (առերես և առցանց մասնակցություն)**

## Գիտաժողովի մասին

*Գիտաժողովի նպատակն է համախմբել հետազոտողներին, կրթության ոլորտի մասնագետներին և պրակտիկ գործունեություն իրականացնողներին՝ ուսումնասիրելու շախմատի դերը կրթության, կոգնիտիվ զարգացման և սոցիալ-հուզական ուսումնառության գործընթացներում:*

*Այն կստեղծի հարթակ՝ էմպիրիկ հետազոտությունների, նորարարական փորձի և միջառարկայական մոտեցումների փոխանակման համար:*

**Գիտաժողովը նախատեսված է՝**

- կրթական և հոգեբանական ոլորտի հետազոտողների համար,
- բուհերի դասախոսների և գիտաշխատողների համար,
- շախմատի ուսուցիչների և մարզիչների համար,
- նախադպրոցական, դպրոցական և ներառական կրթության մասնագետների համար,
- կրթական քաղաքականություն մշակողների և կրթական կառույցների ներկայացուցիչների համար,
- ուսուցիչների վերապատրաստմամբ զբաղվող կազմակերպությունների, անհատների և կրթական ծրագրերի մշակողների համար,
- ասպիրանտների և երիտասարդ հետազոտողների համար:

**Գիտաժողովի ուղղությունները՝**

- Շախմատ և անձի զարգացում
- Շախմատի ուսուցման և ուսումնառության մեթոդներ
- Շախմատը ներառական կրթության մեջ
- Շախմատի ուսուցիչների վերապատրաստում (գործող և ապագա ուսուցիչների վերապատրաստում)
- Շախմատ և թվային գրագիտությունը

## Գիտաժողովի ձևաչափը

Գիտաժողովում նախատեսվում են՝

- Պլենար նիստեր՝ հրավիրված բանախոսների մասնակցությամբ
- Զեկույցներ
- Ինտերակտիվ աշխատարաններ (վարպետաց դասեր, գործնական սեմինարներ, «World Café» ձևաչափ)
- Կլոր սեղան՝ հետագա հետազոտական ուղղությունների քննարկման նպատակով

## Զեկուցներին ներկայացվող պահանջներ

### Ամբողջական հոդվածի ներկայացում

- **Լեզու՝** անգլերեն
- **Ծավալ՝** 2000–6000 բառ
- **Ձևաչափ՝** APA 7-րդ հրատարակության չափանիշներին համապատասխան
- **Կառուցվածք՝** IMRAD (Ներածություն, մեթոդներ, արդյունքներ, ամփոփում, եզրակացություն)
- Անհրաժեշտ է ներառել ամփոփագիր (150–250 բառ) և 4–6 հիմնաբառ։

Բոլոր ներկայացված աշխատանքները կանցնեն փորձագիտական գնահատման (գրախոսության) գործընթաց։

### Ներկայացման պահանջներ

- Բանավոր զեկուցում՝ մինչև 12 րոպե
- Սլայդները պետք է լինեն անգլերեն
- Պահանջվում է նախապես ձայնագրված տեսանյութ (առավելագույնը՝ 12 րոպե, MP4 ձևաչափ, առաջարկվող որակ՝ 1080p)

## Հրապարակման հնարավորություններ

Ընտրված հոդվածները կերաշխավորվեն տպագրության գրախոսվող ակադեմիական ամսագրերում՝ լրացուցիչ գնահատման և անհրաժեշտ վերանայումների պայմանով։